ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/31 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝
Արթուր Շահինյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ.
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ
Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին
1.1 Շնչադիմակների ձեռքբերման նպատակով ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/31 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. ապրիլի 30-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում և գնումների պաշտոնական տեղեկագրում:
1.2 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 07.05.2019թ., ժամը 10.00-ին:
1.3 ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/31 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

1.4 Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Հասցեն, էլ. փոստը
1	«Վարբադ» ՍՊԸ	Ք. Երևան, Արագածի փ. 26 շ. 19 բն, vvarbad@mail.ru

2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,
2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	գնման առարկայի անվանումը	մասնակիցներ	նախահաշվային գին	գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհ. գինը
1	Շնչառական ապարատի դիմակ	«Վարբադ» ՍՊԸ	560 000	1 900 000	380 000	2 280 000

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.1 Հայտեր չեն ներկայացվել 2-րդ չափաբաժնով.
3.2 «Վարբադ» ՍՊ ընկերության գնային աառաջարկը 1-ին չափաբաժնով գերազանցում է նախահաշվային գինը

4. Հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև ս.թ. մայիսի 13-ը, ժամը 16.00-ը, «Վարբաղ» ՍՊ ընկերությանը հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների նիստը տեղի կունենա ս.թ. մայիսի 13-ին ժամը 16.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

13.05.2019թ.

5. Ընդունել ի գիտություն.

Մասնակիցը բանակցություններին չեն մասնակցել. գնային առաջարկներ չեն վերանայվել:

6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 Հաշվի առնելով վերոնշյալը՝ ընթացակարգը հայտարարել չկայացած.

ա) 1-ին չափաբաժնով՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությամբ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի /Օրենք/ 37 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը,

բ) 2-րդ չափաբաժնով՝ ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հատարարության տեքստը (կցվում է):

Հանձնաժողովի

նախագահող՝ _____ Ա. Շահինյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Ա. Մկոյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան